ԵՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ
МЕДИЦИНСКАЯ АКАДЕМИЯ ЭРЕБУНИ ФОНД
EREBUNI MEDICAL ACADEMY FOUNDATION

EREBUNI
MEDICAL ACADEMY FOUNDATION

Address: Titogradian 133, 0087, Yerevan, RA
Tel: +374(10)47-07-60, +374(99)00-67-67
info@erebuniacademy.am, www.erebuniacademy.am

21

Հաստատում եմ

Ռեկտոր՝ Ա. Ա. Իկիլիկյան

« » _____ թ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

Բողոքարկման կարգն ուղղված է ուսումնառողի կողմից ստուգման տարբեր ձևերի /ստուգարք, տարբերակված ստուգարք, ընթացիկ քննություն, եզրափակիչ քննություն, ամփոփիչ ատեստավորում/ դեպքում ցուցաբերած գիտելիքի գնահատման (գնահատականի) վերանայմանը:

2. Բողոքարկման պայմանները

2.1. Ուսումնառողը պետք է ծանոթ լինի գնահատման համակարգին և դրա բաղադրիչներին

2.2. Ուսումնառողը պետք է գիտակցի, ստացած գիտելիքի գնահատման անհրաժեշտությունը

2.3. Ուսումնառողը պետք է տեղեկացված լինի գիտելիքների գնահատման վրա ազդող բոլոր գործոնների մասին

2.4. Ուսումնառողը բողոքարկման իրավունք ունի ոչ օբյեկտիվ, գնահատման անհստակության դեպքում

2.5. Ուսումնառողների գիտելիքների ստուգման և գնահատման համար Ակադեմիայում գործում են քննությունների գրավոր և բանավոր ձևեր:

2.6. Ուսանողը գնահատվում է ըստ պետական կրթական չափորոշիչներով սահմանված գնահատման սանդղակի, հաշվի են առնվում նաև հաճախումները, մասնակցությունը դասապրոցեսին, ինքնուրույն աշխատանքների կատարումը

2.7. Քննող դասախոսը կամ քննական հանձնաժողովը պարտավոր են ուսումնառողների գիտելիքների գնահատումը կազմակերպել և իրականացնել օբյեկտիվ և թափանցիկ

ԷՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ
МЕДИЦИНСКАЯ АКАДЕМИЯ ЭРЕБУНИ ФОНД
EREBUNI MEDICAL ACADEMY FOUNDATION

EREBUNI
MEDICAL ACADEMY FOUNDATION

Address: Titogradian 133, 0087, Yerevan, RA
Tel: +374(10)47-07-60, +374(99)00-67-67
info@erebuniacademy.am, www.erebuniacademy.am

21

Հաստատում եմ

Ռեկտոր՝ Ա. Ա. Իկիլիկյան

« » _____ թ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ԳՐՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

Բողոքարկման կարգն ուղղված է ուսումնառողի կողմից ստուգման տարբեր ձևերի /ստուգարք, տարբերակված ստուգարք, ընթացիկ քննություն, եզրափակիչ քննություն, ամփոփիչ ատեստավորում/ դեպքում ցուցաբերած գիտելիքի գնահատման (գնահատականի) վերանայմանը:

2. Բողոքարկման պայմանները

2.1. Ուսումնառողը պետք է ծանոթ լինի գնահատման համակարգին և դրա բաղադրիչներին

2.2. Ուսումնառողը պետք է գիտակցի, ստացած գիտելիքի գնահատման անհրաժեշտությունը

2.3. Ուսումնառողը պետք է տեղեկացված լինի գիտելիքների գնահատման վրա ազդող բոլոր գործոնների մասին

2.4. Ուսումնառողը բողոքարկման իրավունք ունի ոչ օբյեկտիվ, գնահատման անհստակության դեպքում

2.5. Ուսումնառողների գիտելիքների ստուգման և գնահատման համար Ակադեմիայում գործում են քննությունների գրավոր և բանավոր ձևեր:

2.6. Ուսանողը գնահատվում է ըստ պետական կրթական չափորոշիչներով սահմանված գնահատման սանդղակի, հաշվի են առնվում նաև հաճախումները, մասնակցությունը դասապրոցեսին, ինքնուրույն աշխատանքների կատարումը

2.7. Քննող դասախոսը կամ քննական հանձնաժողովը պարտավոր են ուսումնառողների գիտելիքների գնահատումը կազմակերպել և իրականացնել օբյեկտիվ և թափանցիկ

3. Բողոքարկման ընթացակարգը

3.1. Բանավոր քննության դեպքում՝ ուսումնառողը, առանց քննասենյակից դուրս գալու պարտավոր է բողոքարկման մասին տեղյակ պահել դասախոսին, անհամաձայնության դեպքում տեղեակացվում են առարկայական ամբիոնի վարիչը, պրոռեկտորը: Ուսումնառողը բողոքարկման համար գրավոր դիմում է ներկայացնում Ակադեմիայի ռեկտորին բանավոր քննության ավարտից հետո՝ պարտադիր նշելով բողոքարկման հիմքը:

3.2. Գրավոր քննության դեպքում՝ ուսումնառողը բողոքարկումը պետք է անձամբ ներկայացնի գրավոր տեսքով ոչ ուշ, քան գնահատականը հայտարարելուց մեկ օր հետո:

3.3. Բողոք-դիմումն ընդունելուց և համապատասխան ձևով գրանցելուց հետո ռեկտորը ձևավորում է բողոքարկման հանձնաժողով, որում պարտադիր ընդգրկվում են ռեկտորը (պրոռեկտոր), Ակադեմիայի վարչակազմի ներկայացուցիչ, առարկայի համապատասխան ամբիոնի նախագահը, դասախոսը, ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, և նույն օրը ուսանողի ներկայությամբ կազմակերպում քննարկումը:

3.4. Բողոքարկման հանձնաժողովը ստուգում է ուսանողի գիտելիքների գնահատման համապատասխանությունը հարցատոմսի հարցերի պատասխաններին և բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կայացնում է որոշում՝ 1) գնահատականը (միավորը, ստուգարքի արդյունքը) մնում է անփոփոխ, 2) գնահատականը (միավորը, ստուգարքի արդյունքը) փոփոխվում է (բարձրացվում է կամ իջեցվում):

3.5. Որոշումը ձևակերպվում է համապատասխան արձանագրությամբ, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, անդամների և բողոքարկող ուսանողի կողմից: Կայացված որոշմանն անհամաձայնություն հայտնելու դեպքում ուսանողի կողմից գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

3.6. Բողոքարկման գործընթացը կարող է իրականացվել մեկ անգամ

4. Ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկում

4.1. Ակադեմիայի շրջանավարտները իրավունք ունեն բողոքարկելու պետական ամփոփիչ ատեստավորման արդյունքները:

4.2. Գնահատման արդյունքների հրապարակումից հետո պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահը տեղեկանում է շրջանավարտների կողմից բողոքների առկայության մասին, առկայության դեպքում շրջանավարտը մեկ ժամվա ընթացքում գրավոր դիմումով ներկայանում է նախագահին:

4.3. Բողոքարկման դիմումը ստանալուց անմիջապես հետո, շրջանավարտին է ներկայացվում հանձնաժողովի անդամների գնահատումների արդյունքները:

4.4. Գնահատկման ընթացակարգային խախտումների և ամփոփման սխալների հայտնաբերման դեպքում հանձնաժողովը պարտավոր է.

- փոխել շրջանավարտի գնահատականը, եթե տվյալ խախտումը ազդել է գնահատման արդյունքի վրա
- թողնել անփոփոխ շրջանավարտի գնահատականը, եթե տվյալ խախտումը չի ազդել գնահատման արդյունքի վրա
- չեղարկել ամփոփիչ ատեստավորման արդյունքը, եթե առկա են ընթացակարգային լուրջ խախտումներ և անմիջապես կազմակերպել կրկնակի քննություն